

4. Վերջապես 25.91 կողով (25.9 խմբի 1 դաս) ծածկագրված գործունեության տեսակը «Մետաղական տակառների և համանման այլ տարողությունների արտադրություն» համապատասխանում է օրինակում բերված կազմակերպության գործունեությանը, հետևաբար աղյուսակի «դաս» սյունակում նշվում է 1 թիվը:

5. «Տեսակարար կշիռը (%)» սյունակում համամասնությունները նշվում են տոկոսով համախառն եկամտի նկատմամբ: Նշված տեղեկություններն օգտագործվում են վիճակագրության նպատակով և հիմք չեն հանդիսանում շահութահարկի (սոցիալական վճարների) հաշվարկման (վերահաշվարկման) համար:

Լրացված աղյուսակն ունի հետևյալ տեսքը՝

| Գործունեության տեսակը (կոդը) | | | | | Տեսակարար կշիռը (%) |
|------------------------------|--------|-------|-----|---|---------------------|
| բաժին | հատված | խումբ | դաս | | |
| C | 2 | 5 | 9 | 1 | 100 |
| | | | | | |
| | | | | | |

Մեկից ավելի գործունեություն իրականացնելու դեպքում հաջորդ տողում լրացվում է գործունեության մյուս տեսակի մասին տեղեկատվությունը:

**Հարգելի գործընկեր,
ՏԳՏԴ-ին կարող եք ծանոթանալ**

www.taxservice.am, www.mineconomy.am,
www.smednc.am, www.armstat.am կայքէջերում կամ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք

- զանգահարել 060-544444 հեռախոսահամարով՝ Հարկ վճարողների հեռախոսազանգերի կենտրոն, կամ այցելել հետևյալ հասցեներում գործող մասնագիտացված հարկ վճարողների սպասարկման կենտրոններ.

ք.Երևան, Կոմիտասի 35,
ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 35.

- այցելել կամ զանգահարել «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի Երևանյան գրասենյակ կամ մարզային մասնաճյուղեր, որոնք գործում են հետևյալ հասցեներում.

- ք. Երևան, Մ. Մկրտչյան 5ա, հեռ. (010) 54-16-48, 56-37-14
- ք. Գյումրի, Գ. Նժդեհի 1/5, հեռ. (0312) 3-20-35
- ք. Իջևան, Աշոտ Մելիքբեկյան 5/7, հեռ. (0263) 3-44-58
- ք. Սիսիան, Գարեգին Նժդեհի 2, հեռ. (0283) 0-63-39
- ք. Կապան, Չարենց 2, հեռ. (0285) 2-45-41
- ք. Սյրեփանավան, Գ. Նժդեհի 3/7, հեռ. (0256) 2-39-11
- ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 20, հեռ. (0322) 2-13-70
- ք. Չարենցավան, 6-րդ թաղ., Խանջյան 1, հեռ. (0226) 4-29-26
- ք. Ապարան, Բաղրամյան 24, հեռ. (0252) 2-51-94
- ք. Սևան, Նաիրյան 155ա, հեռ. (0261) 2-49-04
- ք. Արմավիր, Երևանյան 18/1, հեռ. (0237) 2-08-46
- ք. Վալք, Ջերմուկ խճուղի 14/45, հեռ. (0282) 2-17-70
- ք. Արտաշատ, Օգոստոսի 23/136ա, հեռ. (0235) 2-39-22

- զանգահարել 010-580373 հեռախոսահամարով՝ ՀՀ ԱՎԾ վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժին:

**ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ
ՏՆՏԵՄԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԵՄԱԿՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ
ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ
ՁԵՎԵՐՈՒՄ**



Սկսած 2012թ. հունվարի 1-ից հարկ վճարողները իրենց փոփոխական գործունեության տեսակը, ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 03.06.2009թ. №372-Ն հրամանով հաստատված փոփոխական գործունեության տեսակների դասակարգչի (այսուհետ՝ ՏԳՏԴ), ներկայացնելու են հետևյալ հաշվետվական ձևերում.

ա. Շահութահարկի հաշվարկում կամ շահութահարկի պարզեցված հաշվարկում՝ ռեզիդենտ կազմակերպությունների համար,

բ. տարեկան եկամուտների մասին հաշվարկում՝ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար,

գ. պարտադիր սոցիալական ապահովության վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրում՝ անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար:

Տնտեսական գործունեության տեսակի մասին տեղեկատվությունը ներկայացվելու է հետևյալ ձևաչափով.

Աղյուսակ. Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների

| Գործունեության տեսակը (կոդը) | | | | Տեսակարար կշիռը (%) |
|------------------------------|--------|-------|-----|---------------------|
| բաժին | հատված | խումբ | դաս | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

ԱՂՅՈՒՍԱԿԻ ԼՐԱՏՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ



ՔԱՅԼ 1. «Բաժին» սյունակի յուրաքանչյուր փողում լրացվում է գործունեության փյալ տեսակի ՏԳՏԴ-ի համապատասխան բաժնի լափինական փառը:

ՔԱՅԼ 2. «Հատված» սյունակի յուրաքանչյուր փողում լրացվում է նշված բաժնի համապատասխան հատվածի երկնիշ թիվը՝ յուրաքանչյուր սյունակում մեկ թիվ:



ՔԱՅԼ 3. «Խումբ» սյունակի յուրաքանչյուր փողում լրացվում է նշված հատվածի համապատասխան խմբի թիվը՝ բաղկացած 1 նիշից:



ՔԱՅԼ 4. «Դաս» սյունակի յուրաքանչյուր փողում լրացվում է նշված խմբի համապատասխան դասի թիվը՝ բաղկացած 1 նիշից:



ՔԱՅԼ 5. «Տեսակարար կշիռ» սյունակի յուրաքանչյուր փողում լրացվում է գործունեության փյալ տեսակի չափաբաժինը համախառն եկամտի մեջ՝ արտահայտված փոկոսով:

Ստորակերպ պետք չէ դնել: (Օրինակ՝ 1 կամ 21 կամ 100):

Աղյուսակում հարկ վճարողի գործունեության տեսակի կոդի լրացման օրինակ

Կազմակերպությունը զբաղվում է մետաղական տակառների արտադրությամբ: Ընդհանուր առմամբ նյութերի, բաղադրիչների, արտադրատեսակների էական ձևափոխումը, նորոգումը, վերականգնումը դիտվում են որպես մշակող արդյունաբերության գործունեություն:

1. Դասակարգչում գտնում ենք «Մշակող արդյունաբերություն» բաժինը:

Շ ԱՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակի «Բաժին» սյունակում լրացվում է լատինական Շ տառը:

2. Ծանոթանալով մշակող արդյունաբերության հատվածների պարզաբանումներին, մասնավորապես 25 հատվածին, որը ներառում է զուտ մետաղե բաղադրամասերի, բեռնարկղերի և այլ ոչ շարժական արտադրատեսակների արտադրությունը, որոշվում է «հատված» սյունակի երկնիշ թիվը:

25 Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորումներից

Աղյուսակի «հատված» սյունակում լրացվում է տվյալ հատվածի երկնիշ կոդը:

3. Համաձայն 25.9 կոդի (25 հատվածի 9 խումբ) պարզաբանման՝

«Այս խումբը ներառում է տարբեր պատրաստի մետաղե արտադրատեսակների՝ կանխտրների, տակառների, հեղյուսների և համանման արտադրատեսակների արտադրություն» աղյուսակի «խումբ» սյունակում նշվում է 9 թիվը: